

**ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՍԵՎՃՈՎՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Սևծովյան տարածաշրջան հասկացությունը գործածության մեջ մտավ 1990-ական թվականների սկզբին տեղի ունեցած աշխարհաքաղաքական որոշ փոփոխությունների արդյունքում, դրանք են՝ ԽՍՀՄ կազմալուծումը, ՆԱՏՕ-ի ընդլայնումը, որը պահանջ առաջացրեց լրացնելու ստեղծված ազդեցության անջրպետը: Նման իրավիճակում գլոբալ և տարածաշրջանային ուժերը փորձեցին ձևավորել նոր գործառույթի մի ձևական շրջանակ, որում ներկայացված կլինեին, ինչպես նախկին ԽՍՀՄ հետաքրքրություն ներկայացնող հանրապետությունները, այնպես էլ նրանց սահմանակից ազդեցիկ պետությունները՝ Թուրքիան, Հունաստանը, Բուլղարիան և ուրիշները:

Սևծովյան տարածաշրջանի կազմակերպչական կառույցների շարքում ստեղծված առաջին ազդեցիկ միավորը դարձավ Սևծովյան Տնտեսական Համագործակցություն /ՄՇՏՀ/ միջազգային կազմակերպությունը, որի կազմավորման հռչակագիրը ստորագրվեց 1992թ. հուլիսի 25-ին Ստամբուլում¹: Վերոհիշյալ կառույցի անմիջական անդամ դարձան՝ *Ադրբեջանը, Ալբանիան, Հայաստանը, Բուլղարիան, Հունաստանը, Վրաստանը, Մոլդովան, Ռումինիան, Թուրքիան և Ռկրաիան, հետագայում նաև Ռուսաստանը*, իսկ դիտորդի կարգավիճակում հանդես եկան՝ Ավստրիան, Եգիպտոսը, Իսրայելը, Իտալիան, Լեհաստանը, Սլովակիան և Թունիսը, ինչպես նաև Գերմանիան, Ֆրանսիան և Եվրոպական էներգետիկ խարտիան²: Դրանով աշխուժացավ կազմակերպչական ու կոմունիկացիոն գործունեությունը տարածաշրջանի երկրների միջև, որը տարաբնույթ դրսևորումներ ընդունեց: Համագործակցության կառույցի ներսում սկզբնավորվեցին մի շարք համակարգեր, որոնք միտված էին ընդլայնելու Սևծովյան տնտեսական համագործակցության ազդեցության ոլորտները ու գործառույթյան ծավալները:

Հայ-հունական համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանի կառույցներում շարունակվեց այդ շրջանակներում նոր իրավապայմանագրային դաշտի ձևավորմամբ: Առաջիններից մեկը՝ անդամ երկրների միջև 1993թ.

¹ Տե՛ս Դաճիև, «Դեոպոլիտիկա Կաւկազա», Մ 2001, ժ.363.

² Տե՛ս նույն տեղում

մարտի 6-ին կնքվեց «Սևծովյան համագործակցության մասին կոնվենցիան՝ մշակույթի, կրթության, գիտության և ինֆորմացիայի ոլորտում»³: Կոնվենցիայում ամրագրված էր անդամ պետությունների կառավարությունների գործընկերության մասին համաձայնությունը՝ վերոհիշյալ ոլորտներում համագործակցությունը խթանելու նպատակով: Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեին Սևծովյան տարածաշրջանի շրջանակներում իրենց գիտահետազոտական ինստիտուտների շփումներն ու համապատասխան գիտակրթական գործունեության իրականացումը: Առանձնահատուկ ուշադրություն էր դարձվում վերոհիշյալ ոլորտներում համատեղ ծրագրերի կազմակերպման ու իրագործման, ինչպես նաև մասնագետների փոխանակման ու վարժեցման կուրսերի անցկացման վրա⁴: Կոնվենցիայի ղեպոզիտը, այսինքն՝ պահպանող, դարձավ Թուրքիայի կառավարությունը, որի պարտավորությունների մեջ է մտնում բոլոր կողմերին տեղեկատվություն տրամադրելը՝ կոնվենցիայից բխող խնդիրների շուրջ: Առաջին լուրջ համաձայնության ձևավորումը Սևծովյան երկրների միջև և դրանում Թուրքիայի համակարգող դերի ստանձնումը պահանջ առաջացրեց կազմավորվելիք նոր կառույցներում ձևավորել մրցունակ ուժային կենտրոններ՝ դիմագրավելու Թուրքիայի հեգեմոնիային այդ տարածաշրջանում:

ՄԾՏՀ շրջանակներում տնտեսական մեծ կշիռ ունեցող կենտրոնների գործունեությունը իրենց տարածքում ապահովելու նպատակով՝ անդամ պետությունների կառավարությունները մտան լուրջ մրցակցության մեջ: Մրցակցությունը ավարտվեց Հունաստանի հաղթանակով, որում իր լուծման ունեն նաև Հայաստանը: Տնտեսական տարաբնույթ գործառնություններ իրականացնելու նպատակով ստեղծվեցին տարածաշրջանային կենտրոններ, որոնցից Սևծովյան հետազոտությունների Միջազգային Կենտրոնը՝ Աթենքում, իսկ Առևտրի և Զարգացման բանկը՝ Սալոնիկում: Դրան նախորդել էին լարված բանակցություններ Հայաստանի և Հունաստանի ներկայացուցիչների միջև, որոնք ընթանում էին դիվանագիտական խողովակների միջոցով:

Հունաստանը ձգտում էր առաջնային դիրք գրավել Սևծովյան տարածաշրջանային կառույցներում և ակնկալում էր Հայաստանի աջակցությունը՝ որպես կառույցի անդամ և գործընկեր պետություն: Հունաստանի արտգործնախարար Միքայել Պապակոնստանտինիուն պաշտոնական գրության միջոցով (1993թ. հունիսի 10-ին) տեղեկացնում էր իր հայ գործընկերոջը Հունաստանի կառավարության որոշման մասին Սալոնիկը որպես Սևծովյան տնտեսա-

³ Տե՛ս ԳԳ ԱԳՆ գերատեսչական արխիվ, ֆոնդ 1, գործ 1, էջ 1:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 3-5:

կան համագործակցության, Առևտրի և զարգացման բանկի կենտրոն առաջարկելու համար⁵: Գրությանը զուգահեռ կցված էր Հունաստանի ԱԳՆ փաստաթղթերը՝ Սալոնիկը գլխակենտրոն ընտրելու օգտին: Ազդեցիկ փաստաթղթերից էր Հունաստանի պատկանելությունը Եվրամիությանը, որը Սևծովյան տնտեսական համագործակցության երկրների շրջանակներում միակն էր: Վերոհիշյալ հնարավորության առկայությունը կապահովեր շարունակական տեղեկատվության, տեխնոլոգիաների և փորձի փոխանցումը Եվրամիությունից և նրա կառուցվածքային մեխանիզմների փորձի օգտագործումը Սևծովյան տարածաշրջանի առջև դրված խնդիրները լուծելու գործում⁶: Սևծովյան տարածաշրջանային կառույցներում անդամ պետությունների հարաբերությունները ընդունում էին ռազմավարական և շարունակական բնույթ: Յուրաքանչյուր տարածաշրջանային կառույցում առկա են նաև հակամարտող խմբավորումներ, որից զերծ չէ նաև Սևծովյան տարածաշրջանը և դրանում տարբեր ուժային կենտրոնների մրցակցությունը նպաստում է հավասարակշռության ապահովմանը:

1993թ. ընթացքում հունական արտաքին գործոց գերատեսչությունը բազմիցս գրություններ էր հղում հայկական կողմին, ուր խնդրվում էր աջակցություն ցուցաբերել Հունաստանի առաջարկին՝ Սալոնիկը Սևծովյան Առևտրի և զարգացման բանկի նստավայր ընտրվելու գործում: Այդ հարցը արծածվեց նաև ՀՀ ԱԳ նախարար Փափազյանի այցի ժամանակ Աթենքում, որի արդյունքում հայկական կողմը մի անգամ ևս հավաստիացրեց իր պատրաստակամությունը աջակցելու Հունաստանին այդ գործում, ինչպես նաև տեղեկացվեց, որ Հայաստանի ներկայացուցիչներին՝ ՍԾՏՀ-ում արդեն տրվել են այդպիսի հանձնարարականներ⁷: Դիվանագիտական երկար պայքարից հետո հույները վերահաստատեցին Սալոնիկի կարևոր նշանակությունը Սևծովյան և Բալկանյան երկրների ֆինանսական ու առևտրական կյանքում, որոնք բախվում էին նույնանման թուրքական ծրագրերին⁸: Պետք է նշել, որ հունական հաջողություններում վճռական դեր էր պատկանում նրա անդամակցությանը Եվրամիությանը: Աստիճանաբար ՍԾՏՀ-ն վերածվում է տարածաշրջանային երկրների համագործակցության մի կարևոր օղակի, որն իր ընդհանրության մեջ հավակնում է դառնալ Եվրոպայի վստահելի գործընկեր և նպաստել անդամ-պետությունների ու ԵՄ-ան միջև կապերի աշխուժացման գործին:

⁵ Տե՛ս ՀՀ ԱԳՆ գերատեսչական արխիվ, ֆոնդ I, գործ 208, էջ 1:

⁶ Տե՛ս Նույն տեղում:

⁷ Տե՛ս Նույն տեղում, գործ 87, էջ 11:

⁸ Տե՛ս Նույն տեղում, էջ 154:

ՍԾՏՀ գործունեությունը համակարգում է ռոտացիոն սկզբունքով ընտրվող նախագահը /վեց ամիս ժամկետով/, որը սովորաբար դառնում է անդամ երկրներից մեկի արտգործնախարարը: Կազմակերպության կառուցվածքում կարևոր դեր է խաղում նաև միջազգային քարտուղարությունը, որն աշխատում է գործող նախագահի ղեկավարության ներքո: Դրանց վերաբերվող խնդիրները իրենց լուծումներն են գտնում ՍԾՏՀ անդամ պետությունների ԱԳ նախարարների տարեկան հանդիպումների արդյունքում:

Սևծովյան երկրների միջև իրական տնտեսական համագործակցության աշխուժացմանն էր ուղղված ազատ առևտրի գոտու ձևավորումը: ՍԾՏՀ անդամ-պետությունների Մոսկովյան հայտարարագրով /1996թ. հոկտեմբերի 25-ին/ նախատեսվում էր կիրառել փոխադարձ բարենպաստության ռեժիմ առևտրի բնագավառում մասնակից երկրների միջև, ինչպես նաև ՍԾՏՀ շրջանակներում ազատ առևտրի գոտու ստեղծումը: Դրա շուրջ անդամ-պետությունների կառավարությունների ղեկավարները 1996թ. հուլիսի 5-ին Յալթայում ստորագրեցին ՍԾՏՀ կանոնադրությունը, որը վավերացրեցին 11 անդամներից 10-ը⁹: ՍԾՏՀ անդամ-պետությունների տարբեր դիրքորոշումները ազատ առևտրի գոտու ձևավորման շուրջ հանգեցրեց հակասության, որում Հայաստանը, Հունաստանը, Թուրքիան և Ռեկրաիման առաջարկեցին իրենց տարբերակները: Ռուսաստանը առաջարկում էր մինչ կոնկրետ գործողություններին անցնելը՝ անդամ պետություններում իրականացնել արտաքին առևտրի բնագավառներում նախնական համակողմանի վերլուծություն: Ազատ առևտրի գոտու ստեղծման համար առաջնահերթ քայլեր էին համարվում երկկողմ պայմանագրերի և տրանսպորտային համակարգերի զարգացումը, ինչպես նաև տարածաշրջանային երկրների միացումը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը և մաքսային կանոնադրության ունիֆիկացման անցկացումը: Անդամ պետությունների շրջանակում կազմվում էր առաջնահերթ միջոցառումների մի փաթեթ, որի նպատակն էր տնտեսական ու սոցիալ-քաղաքական ոլորտներում ունիֆիկացման միջոցով առկա արգելքների հաղթահարումը: Հիմնական բարդույթները վերաբերվում են սկզբունքային հարցերին՝ ՍԾՏՀ անդամ պետությունների տնտեսությունները չեն գործում փոխլրացման սկզբունքով և նրանց միջև ընթացող համագործակցությունը չի համապատասխանում միջազգայնորեն ընդունված տնտեսական չափանիշներին, ինչն առկա է Եվրամիության դեպքում: Սևծովյան տարածաշրջանի պետությունների արտաքին առևտուրը կողմնորոշված է հիմնականում դեպի տնտեսապես զարգա-

⁹ Стів Гаджиев, «Геополитик» «ВКЗ» М 2001, стр.364.

ցած եվրամիության երկրները: Տնտեսական խոչընդոտներից զատ առկա են նաև որոշ քաղաքական բնույթի բարդություններ, որոնք առնչվում են առանձին պետությունների ամբիցիաներին՝ տարածաշրջանում գերիշխող դիրք գրավելու և ինտեգրացիոն գործընթացները ուղղորդելու մեջ: Սևծովյան տարածաշրջանում, համաձայն որոշ դիտարկումների, կազմավորվել են երկու հակամարտող խմբավորումներ: Առաջինում ընդգրկված են՝ Ռուսաստանը, Բուլղարիան, Հունաստանը և Հայաստանը, իսկ երկրորդում՝ Թուրքիան, Ռեկրաիման, Ադրբեջանը և Վրաստանը¹⁰: Նման ընդդիմադիր իրավիճակի ձևավորումն իր բացասական անդրադարձն է թողնում նաև Սևծովյան տարածաշրջանի գործընթացների հետագա զարգացման վրա:

Թեպետ Սևծովյան կառույցներում նկատվում է որոշակի ընդհանուր արգելակվածության մթնոլորտ, սակայն հայ-հունական շփումները կառույցի ներսում շարունակում են իրենց բնականոն ընթացքը:

Հայ-հունական շփումների դրվագները և դրանց ազդեցությունը կառույցի վրա՝ ընդհանուր առմամբ և երկկողմ կապերի վրա՝ մասնավորապես բացահայտվում է մի շարք օրինակներով: Հայաստանի և Հունաստանի կառավարությունները Սևծովյան տարածաշրջանի կառույցներում առկա խնդիրները հաճախակի նախընտրում են լուծել՝ օգտագործելով արդեն փորձված երկկողմ դիվանագիտական կապերը: Սալոնիկը ՄՕՏՀ-ի Առևտրի և զարգացման բանկ դառնալու գործում ընթացած դիվանագիտական բանակցությունները բացահայտեցին տարածաշրջանային այդ կառույցում երկու պետությունների շահերի համընկնումը: Ինչպես շատ միջազգային կազմակերպություններում, այնպես էլ ՄՕՏՀ-ում հատուկ ուշադրություն է դարձվում անդամ պետությունների մասնագետների վերապատրաստմանը ուղղված միջոցառումների անցկացմանը: ՀՀ առևտրի, ֆինանսների, զբոսաշրջության և արտաքին գործերի նախարարության աշխատակիցներից բաղկացած 24 հոգանոց պատվիրակությունը մասնակցեց 1995թ. Աթենքում տեղի ունեցած դասընթացներին, ուր հատուկ ուշադրության առարկա էր ՄՕՏՀ-ի շուրջ առկա խնդիրները¹¹: ՄՕՏՀ-ի շրջանակներում նախաձեռնվող համաժողովների և փորձագետների հանդիպումների կազմակերպման գործում առաջնային դերը իր վրա է վերցնում Հունաստանը՝ հատկապես Առևտրի և զարգացման բանկի ու Սևծովյան հետազոտությունների միջազգային կենտրոնի շրջանակներում: ՄՕՏՀ Առևտրի և զարգացման բանկի փորձագետների խմբի անդրանիկ հանդիպումը զուամրվեց Աթենքում 1995թ.

¹⁰ Տե՛ս Кожокин, Российский институт стратегических исследований, Армения, Проблемы независимого развития, М. 1998, ст. 558.

¹¹ Տե՛ս ՀՀ ԱԳԼ գերատեսչական արխիվ, ֆոնդ I, գործ 91 էջ 21:

հունվարի 18-ին¹², ուր պատվիրակությունները ներկայացված էին երկրների կենտրոնական բանկերի փոխտնօրենների մակարդակով: Այս հանդիպումը հուլյների կողմից օգտագործվեց միջնորդելու համար հունական առևտրային բանկի մասնաճյուղը երևանում բացելու նպատակով: Ուշադրության է արժանի մաս նույն թվին Աթենքում գումարված ՍԾՏՀ տրանսպորտի ոլորտի փորձագետների հանդիպումը, որի ընթացքում նախապատրաստվեց՝ ավտոմայրուղիների, երկաթուղիների և ծովային ուղիների սխեմատիկ քարտեզներ, որոնք նպատակ էին հետապնդում բարելավելու տարածաշրջանի տրանսպորտային համակարգի արդյունավետությունն ու ապահովությունը և իրականացնելու ազգային ենթակառուցների ու համաեվրոպական տրանսպորտային համակարգերի համադրում:

Ընդհանուր առմամբ 90-ական թթ. կեսերը արձանագրեցին հայ-հունական կապերի աշխուժացում ՍԾՏՀ շրջանակներում: Հունական ՕՏԵ պետական հեռահաղորդակցության ընկերությունը Հունաստանում, ՀՀ դեսպանատան միջոցով, փորձում էր իր ծառայությունները առաջարկել Հայաստանին կապի ոլորտում ներգրավվելու համար. «Հայաստանը և Հունաստանը որպես ՍԾՏՀ-ի անդամներ կարող են առավել զարգացնել իրենց համագործակցությունը, և կապի ոլորտը այդ տեսակետից կարող է վճռորոշ դեր խաղալ»¹³: Նշելով հունական ընկերության մատուցվող ծառայությունների շրջանակը, ՕՏԵ-ի ղեկավարությունը ակնկալում էր ՀՀ դեսպանատան աշխատակիցների հետ բանակցություններ որոշ խնդիրներ քննարկելու նպատակով:

Տարածաշրջանային կառույցներում հայ-հունական գործակցության ճանապարհին 1995թ. խնդիր էր առաջացել ՀՀ-ի առջև Սևծովյան Առևտրի և զարգացման բանկի հիմնադիր անդամ դառնալու գործում՝ սկզբնական կապիտալ մուծելը: Խնդրի բարդությունը գումարը՝ 2,82 մլն ԱՄՆ դոլար փոխանցելու անհրաժեշտությունն էր՝ բանկի հիմնադիր անդամ դառնալու պահից 60 օրվա ընթացքում¹⁴: Սեկ այլ խնդիր էր դրա նպատակահարմարության հարցը, որը, ըստ ՀՀ ֆինանսների նախարարության փորձագետների վերլուծության, «Հայաստանը դժվար թե իր անդամավճարի չափից ավելի մեծ վարկի հույս կարող է ունենալ»¹⁵: Չնայած այդ մտավախությանը ՀՀ կառավարությունը վճռական էր անդամակցելու տարածաշրջանային նման կառույցի գործունեու-

¹² Տես նույն տեղում:

¹³ Տես ՀՀ ԱԳՆ գերատեսչական արխիվ, ֆոնդ 1, գործ 2, էջ 3, համագործակցության առաջարկը ՕՏԵ-ի միջազգային կապերի տնօրենի կողմից ներկայացված էր՝ գրության տեսքով /1995թ. հունիսի 5/և ուղղված էր Հունաստանում ՀՀ դեսպանին:

¹⁴ Տես ՀՀ ԱԳՆ գերատեսչական արխիվ, ֆոնդ 1, գործ 211 էջ 132:

¹⁵ Տես նույն տեղում:

թյանը և կատարելու իր վրա վերցրած պարտավորությունները: Փոխզիջման հասնելուն էր ուղղված ՀՀ-ի և Հունաստանի կառավարությունների միջև ընթացող բանակցությունները, որոնք գրանցեցին դրական արդյունք: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ՍՇՏՀ Առևտրի և զարգացման բանկի կողմից, 1996թ. ընթացքում, Հայաստանին հատկացնել 2.9 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկային գումար¹⁶: Նույն ժամանակամիջոցում հայկական կողմը դիվանագիտական խողովակներով բանկի ավանդապահ Հունաստանին ներկայացրեց ՍՇՏՀ Առևտրի և զարգացման բանկի նոր մասնաբաժնի շուրջը իր որոշումը, որի արդյունքում հունական կողմը կրկին առաջարկեց իր օգնությունը Սևծովյան կառույցի առջև ՀՀ ֆինանսական պարտավորությունները կատարելու գործում¹⁷: Սևծովյան այս կառույցում հայ-հունական գործակցությունը ընդունեց շարունակական բնույթ: Սևծովյան Առևտրի և զարգացման բանկի անդամակցության ՀՀ մասնաբաժնի վճարումն ապահովելու նպատակով, 1998թ. դեկտեմբերի 17-ին, համաձայնագիր ստորագրվեց ՀՀ դեսպան Ա. Կիրակոսյանի և Հունաստանի էկոնոմիկայի փոխնախարար Ա. Բալատոսի միջև: ՀՀ կառավարությանը 2 մլն 720 հազ. ԱՄՆ դոլար անհատույց տեխնիկական օգնություն տրամադրելու նպատակով¹⁸:

Գործնական կապերի ձևավորման ու ամրապնդման ճանապարհին կարևոր դեր են ունենում ՍՇՏՀ-ի շրջանակներում մշտապես կազմակերպվող գազաթափողովներն ու տարեկան հանդիպումները՝ անդամ պետությունների կառավարությունների տարբեր ներկայացուցիչների մակարդակով:

Հայկական պատվիրակությունը մասնակցություն ունեցավ նաև Աթենքում 1998թ. սեպտեմբերի 28-29-ը գումարված Սևծովյան Ռեսուրսափորությունների Միջազգային Կենտրոնի (ICBSS) տնօրենների խորհրդի անդրանիկ հանդիպմանը¹⁹:

ՍՇՏՀ ներքին գործերի նախարարների համաժողովում 1998թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, որը տեղի էր ունենում Կերկիրա կղզում հայկական կողմը ներկայացնում էր ՀՀ ներքին գործերի ու ազգային անվտանգության նախարար Ս. Սարգսյանը²⁰:

Հայաստանը իր ազգային շահերն է հետապնդում և փորձում է դրանց լուծումները գտնել նաև Սևծովյան տարածաշրջանում նախաձեռնվող քաղա-

¹⁶ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, ժամանակագրություն 1991-1998թ. էջ 37:

¹⁷ Տե՛ս ՀՀ ԱԳՆ գերատեսչական արխիվ, ֆոնդ I, գործ 4 էջ 8:

¹⁸ Տե՛ս ՀՀ ԱԳՆ ընթացիկ արխիվ, ժամանակագրություն 1991-1998թ. էջ 41:

¹⁹ Տե՛ս նույն տեղում:

²⁰ Տե՛ս նույն տեղում:

քական բնույթի հանդիպումների արդյունքում: Սևծովյան տնտեսական համագործակցության խորհրդարանական վեհաժողովի /ՍՇՏՀԽՎ/ հանդիպման նախաշեմին Հայաստանի խորհրդարանական պատվիրակության առջև խնդիր էր դրված քննարկել ՀՀ-ի շահերից բխող մի խումբ հարցեր, որոնցից առավել կարևոր էին առկա տրանսպորտային շրջափակման ու տարանցիկ փոխանցումների հեշտացման խնդիրը և ՍՇՏՀ շրջանակներում ազատ առևտրի գոտու ձևավորման գործընթացի արագացումը²¹: Նման հրահանգները վկայում են ՀՀ պատրաստակամության մասին ավելի աշխույժ ներգրավվելու տարածաշրջանում նախաձեռնվող գործընթացներին: Հայաստանի այդ դիրքորոշումը բացատրվում է նախորդ փորձով ու դրանից ձեռք բերած դեվիդենտներով, որը ձգտում էր տարածել ողջ կառույցի անդամ պետությունների գործակցության շրջանակում: Ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման փորձագետների հաշվարկների, 2001թ. դրությամբ Հայաստանում ներդրումների չափով առաջին երկու տեղերը զբաղեցնում են ՍՇՏՀ-ի անդամներ Ռուսաստանը՝ 183.7 մլն ԱՄՆ դոլար և Հունաստանը՝ 152.2 մլն ԱՄՆ դոլար, որոնք առաջին երկրներն էին, որոնց հետ Հայաստանը կնքել էր համաձայնագրեր ազատ առևտրի գոտու մասին²²:

Հայաստանը, որպես ՍՇՏՀ լիիրավ անդամ, իրականացնում էր կազմակերպության կանոնադրությունից բխող պարտականությունները: 2002թ. ընթացքում Հայաստանի ողջ ուշադրությունը սևեռված էր ՍՇՏՀ-ում նախագահողի պարտականությունները ստանձնելուն, որից ելնելով մշակում և հաստատում էր հատուկ այդ ժամանակամիջոցի համար նախատեսված միջոցառումների ծրագիր²³:

Ինչպիսին որ լինեն զարգացումները Սևծովյան տարածաշրջանի կառույցներում, Հայաստանի մասնակցությունը դրանում ոչ թե վտանգում է ազգային ինքնիշխանության որոշ դրսևորումներին /կապված անդամակցությամբ ստանձնած պարտավորություններով/, այլ ամրապնդում է դրանք՝ մասնակից դառնալով այդ կառույցի անմիջական գործունեությանը և հնարավորության դեպքում փորձում ազդել իր ազգային շահերին նպաստող որոշումների ընդունմանը: Գիտակցելով Սևծովյան տարածաշրջանում ձևավորված առանցքների վտանգավորությունը՝ ընդհանուր խնդիրների իրականացման գործում,

²¹ Տե՛ս Տեղեկանք ՍՇՏՀ-ում Հայաստանի մասնակցության վերաբերյալ, ՀՀ Ազգային ժողովի ընթացիկ արխիվ, Եր. 2001, էջ 1:

²² Տե՛ս Նույն տեղում, էջ 4

²³ Տե՛ս Տեղեկանք Առևտրի և տնտես. զարգացման նախարարության 2002թ. տարեկան հաշվետվության վերաբերյալ, ընթացիկ արխիվ

Հայաստանը փորձում է իր ներդրումն ունենալ իրավիճակի կայունացման ուղղությամբ, որը համընկնում է նրա գործընկերներ՝ Հունաստանի և Ռուսաստանի դիրքորոշումների հետ:

Սևծովյան տարածաշրջանի կառույցները ի սկզբանե ստեղծվել էին որպես առևտրատնտեսական համագործակցությունը համակարգող օղակներ, այլ ոչ թե քաղաքական կամ ռազմական ազդեցությունը տարածելու նոր միջոց: Իրականությունից հեռու են այն վերլուծողները²⁴, որոնք գտնում են, որ Սևծովյան գործող կառույցների միջոցով հնարավոր է որևէ պետության ռազմական ազդեցության տարածումը, քանի որ կառույցի անդամ պետությունները արդեն ապահովել են կամ էլ ձգտում են ապահովել իրենց անվտանգության երաշխիքները ուրիշ կառույցների միջոցով:

Սևծովյան տարածաշրջանում հայ-հունական համագործակցությունը հիմնված է գերազանցապես երկկողմ կապերի հիմքի վրա, որն իր տրամաբանական և արդյունավետ իրագործումն է գտել նաև այդ շփումների շրջանակներում:

²⁴ Տե՛ս Հայոց աշխարհի 9/06/1998